

ԱՐՏԱՍԱՆՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԷՂՎԱՐԴ ԳԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՈՒ-Լ-ԱԼԱ ԱԼ-ՄԱՍՆԱՐԻ.

ԿՅԱՆՔՆ ՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Արաբական դասական պոեզիայի նշանավոր պոետ-փիլիսոփաներից է Աբու-լ-Ալա ալ-Մասնարին (973-1057): Ալ-Մասնարին ստեղծագործությունները ոչ միայն արաբական պոեզիայի 400-ամյա պատմության դազաթն են, այլև խալիֆայության բարդ ու խայտարդետ մշակութթի մի յուրօրինակ համադրություն:

Ալ-Մասնարին ապրում էր անհանգիստ դարաշրջանում: Միրիայի քաղաքական իրավիճակը շատ անկայուն էր: Տեղական ֆեոդալ կառավարիչները մշտական պայքարի մեջ էին, ձեռքից ձեռք էին անցնում քաղաքներ և ամբողջական շրջաններ, ու դրանից մեծապես տուժում էին բնակիչները:

Պոետի հարազատ քաղաքը՝ Ան-Նու՛մանը, ալ-Մասնարինի ժամանակներում ենթարկվում էր հալեպյան իշխանություններին, և պոետի ճակատագիրը շատ հարցերում կախված էր նրանցից: Ալ-Մասնարին մանկուց վկա էր կառավարիչների մշտական փոփոխման, կողոպուտների և այդ դարաշրջանի ողբերգական իրադարձություններին:

Պոետը ծնվել է 973 թ., վաղ հասակում կուրացել է ծաղկախտից: Նա կարճ ճանապարհորդություններ է կատարել Միրիայի ու Իրաքի քաղաքներով և իր հարազատ քաղաք ան-Նու՛ման է վերադարձել 1010 թ.: ապրելով այնտեղ մինչև կյանքի վերջը՝ 1057 թ.:

Ըստ տեղեկությունների՝ պոետի պապը եղել է «կադի»՝ թե՛ հարազատ քաղաքում, թե՛ Հոմսում, իսկ պոետի հայրը, ինչպես գրում է ալ-Մասնարին իր ընտանիքում, եղել է կիրթ իրավաբան: Աբու-լ-Ալան իր ընտանիքից մեկը նվիրել է նաև իր մորը, որը մահացել է, երբ պոետը 37 տարեկան էր:

977 թ., պատմաբան ալ-Ջահաբիի վկայությամբ, պոետը հիվանդացել է ծաղկախտով, որի հետևանքով կուրացել է ձախ աչքից, նշանակալի չափով նվազել է նաև աջ աչքի տեսողությունը: Արդյունքում նա լիովին կուրացել է:

Սովորաբար ուսումնասիրողները ալ-Մա'արիի կյանքը բաժանում են երեք շրջանի՝ մանկության և ուսման տարիները (մինչև Բաղդադից Մա'արաթ ան-Նու'ման վերադառնալը՝ 1010 թ.), իսկ երրորդը՝ այն տարիները, որոնք պոետը անց է կացրել իր հայրենի քաղաքում մինչև իր կյանքի վերջը: Գրեթե ոչինչ հայտնի է պոետի մանկության, ուսումնառության տարիների, ուսուցիչների և այն դրքերի մասին, որոնք նա կարդացել է երիտասարդ տարիքում: Ալ-Մա'արիի պոեզիան վկայում է փիլիսոփայության և գրականության պատմության մասին ունեցած պոետի խորը գիտելիքների մասին: Հետաքրքրասեր պատանուն չէր կարող բավարարել այն կրթությունը, որը նա ստացել էր հարազատ քաղաքում, և գիտելիքի ծարավը նրան դրդում է կույրի համար դժվարին ճանապարհորդությունների՝ Սիրիայի ու Իրաքի քաղաքներով: Ալ-Մա'արիի կրթության ու աշխարհայացքի ձևավորման համար առավել կարևոր դեր խաղաց նրա ճանապարհորդությունը դեպի Բաղդադ: Ալ-Մա'արիի ժամանակներում գիտության մարդկանց դրոշմունքը շատ բարդ էր. XI դարում ազատամտությունը չէր խրախուսվում, և նրանք, ովքեր փորձում էին «վերանայել» սուլեյմանյան ավանդական աստվածաբանությունը բանականության դիրքից, հաճախ անվանվում էին հերետիկոսներ: Այդպիսի հերետիկոսներ էին համարվում մասնավորապես իսլամա-շիական ուղղության գիտնականները, որոնք Բաղդադում ու Բուֆայում հիմնել էին ոչ մեծ խումբ՝ «Մաքրության եղբայրներ» («Իսլամի աս-սաֆա'»):

Ալ-Մա'արիի գրչին են պատկանում ավելի քան 270 դիդակտիկ ստեղծագործություններ, տրակտատներ, անձնական ուղերձներ, սակայն, ցավոք, ոչ բոլորն են պահպանվել:

* * *

Իր բանաստեղծությունները պոետը հավաքել է՝ երկու ժողովածուներում՝ «Կայծեր հրահանից» («Սակտ ազ-զանդ») և «Անհրաժեշտություն ոչ անհրաժեշտի» («Լուզում մա լա յալզամ»):

Ալ-Մա'արիի վաղ շրջանի բանաստեղծությունները ամփոփված են «Սակտ ազ-զանդ» ժողովածուում, որոնք դրվել են մինչև Բաղդադից պոետի՝ հայրենի քաղաք վերադառնալը:

իր առաջին ժողովածուն ալ-Մա'արին անվանեց «Կայծեր հրա-
Հանից»՝ նկատի ունենալով, որ դրանք առաջին կայծերն են Հետա-
գա բորբոքուն խարույկի: Այսպիսով էլ գրքի անվանումը Հանդես
է գալիս իբրև խոստովանություն, որ այդ ստեղծագործություննե-
րը «գրչի առաջին փորձեր» են, իսկ գլխավորը կլինի այն, ինչը
կհետևի դրան:

«Սակտ ազ-զանդ» ժողովածուի մեջ նշանակալից տեղ են գրա-
վում ներբողները: Դրանք բանաստեղծն ուղղել է իր ընկերներին,
ծանոթ պոետներին և այլն: Սակայն նույնիսկ այն դեպքում, երբ
պոետը իր ներբողը հասցեագրում է քիչ թե շատ հարուստներին ու
նշանավորներին, բանաստեղծական ուղեբժի ոգին ու ոճը ոչնչով
չեն հիչեցնում պալատական գովերգուների ավանդական ներբող-
ները: Ալ-Մա'արին չի հետևել նորմատիվ ներբող-կասիդա ձևին:

Ալ-Մա'արիի էլեգիաների նախաբանում առկա են ժանրին հա-
տուկ մոտիվներ անապատային գիշերների մասին: Նախաբանից
հետո ալ-Մա'արին ժանրի պահանջով խոսում է Հանգուցյալի հա-
բազատների վշտի մասին և համառոտ թվարկում մահացածի բոլոր
արժանիքները: Այնուհետև մոտ 40 բեյթ պոետը մտորում է ան-
կանխատեսելի բախտի, իր կյանքի փորձի մասին: Պոետը կարծես
ժամանակավորապես մոռացուցյան է մատնում ողբերգական էլե-
գիաները:

Ալ-Մա'արին խուսափում է նախախաղածական շրջանի պոեզիա-
յի ձևերից և շեղվելով բուն թեմայից՝ տրվում է մասնակի նկարագ-
րություններին:

Կարելի է ասել, որ ալ-Մա'արիի սգո էլեգիաները ժանրի բազ-
մադարյան զարգացման դադաթնակետն են:

Որոշ չափով ավանդական ժանրային սխեմայից դուրս են մնում
ալ-Մա'արիի այն բանաստեղծությունները, որոնք նա գրել է Բադ-
դադում գտնվելիս: Դրանք ներշնչված են կարոտախտի ունալ զգա-
ցումով, որը տածում էր պոետը հարազատ քաղաքից հեռու գտնվե-
լու ժամանակ: Հեռավոր հայրենիքի մասին տխուր մտորումներին է
նվիրված «Սակտ ազ-զանդ» ժողովածուի պոեմներից մեկը:

Արաբական Հին կասիդան պարտադիր կերպով պարունակում
էր ուասֆ⁴, և ալ-Մա'արին, շարունակելով ավանդույթը, բավակա-
նին սահուն կերպով անցում է կատարում պոեմի նկարագրական
մասին: Սակայն դա Հին կասիդայի ոգով կենդանու նկարագրու-

թյուն չէ, այլ կենդանի պատկեր, որը հանդես է գալիս խորացնելու հոգեբանական զուգահեռականությունը:

«Սակտ ազ-զանդ»-ի բանաստեղծությունների մեջ կա մի հատուկ ցիկլ «Օղագրահներ» («Աղ-Դիրա՛խյաթ»): Ամենայն հավանականությամբ մենք երբեք չենք իմանա, թե ինչն է դրդել կույր պոետին՝ երեք տասնյակ բանաստեղծություններ նվիրել պաշտպանական զենքի նկարագրությանը: Հավանաբար նրան գրավել է անսովոր առարկայի ձևը, որին նա ծանոթացել է շոշափելով, և, հնարավոր է, որ նրան դուր է եկել դրա ձայնը:

Վաղ շրջանի բանաստեղծություններում, շարունակելով «գասականների» ավանդույթը, Ալ-Մա՛արին պոեզիա ներմուծեց քնարական-փիլիսոփայական տարրեր: Սակայն ամբողջությամբ «Սակտ ազ-զանդ» ժողովածուի բանաստեղծությունները դեռ ենթարկվում են դարաշրջանի ոճին ու մեթոդներին:

Եթե «Սակտ ազ-զանդ»-ի մեջ գինին ու գինարուքները նշանակալից տեղ են զբաղեցնում, ապա բանաստեղծի ավելի ուշ շրջանի երկերում գինու մասին միտքը նրան նողկալի է թվում, և նա ամբողջովին մերժում է խամրիյաթ⁵ ժանրը:

Ալ-Մա՛արիի միտքը կարծես թե ձուլված է հակասություններից: Աշխարհի հանդեպ նրա կատաղի ատելությունը զուգակցվում է նրա հոգում մարդկանց նկատմամբ սիրո հետ, մերկացումը փոխակերպվում է խղճահարություն, մարդատյացությունը փոխակերպվում է արդարություն բուռն կոչի:

Ալ-Մա՛արիի փիլիսոփայական քնարերգության լեզուն արտակարգ պատկերավոր է, իմաստաբանորեն չեզոք բառերը նրա բանաստեղծություններում զգալիորեն քիչ են:

Ալ-Մա՛արիի ավելի ուշ շրջանի և բանաստեղծական առավել կարևոր ժողովածուն է «Լուզումիյաթը» կամ «Լուզում մա լա յալ-գամ»-ը: Այս ժողովածուում առաջին անգամ արաբական միջնադարյան պոեզիայում բանաստեղծ-մտածողի լիրիկական ինքնադրսևորումը դառնում է բանաստեղծական գործունեության հիմնական ազդակ: Եթե դասական միջնադարյան ժանրային համակարգը, հավակնելով ունիվերսալության, ներառում էր հասարակական ու անձնական կյանքի բոլոր բնագավառները և դրա հիման վրա ստանում էր պատկերավոր առարկաների շրջանակը սահմանափակելու իրավունք՝ հնարավորություն՝ տալով պոետին՝

միայն տարատեսակի ավանդական թեմաները, ապա ալ-Մա'արիի մոտ փրիխտոփայական թեմատիկան գալիս էր իրականութեան խորը ընկալումից և անձնական կյանքի փորձից: Նրա մեղիտատիվ քնարերգութեան մեջ չենք հանդիպում ո՛չ ավանդական լքված քոչվորատեղերի, ո՛չ քաջարի հերոս-գիւնդորնների և այլն: Այստեղ միայն բանաստեղծն է և իր մտորումները մարդկային կյանքի մասին, և այս ամենը գրված է հենվելով դարերով մշակված բարձր բանաստեղծական արվեստի և բանաստեղծական ձևի վրա:

Այս առումով «Լուզումիյաթ»-ը բացառիկ երևույթ է: Այս ժողովածուն ալ-Մա'արին ստեղծել է մոտ 50 երկար ու ձիգ տարիների ընթացքում: Ըստ հեղինակի՝ ժողովածուի վերնագիրը պետք է ընկալել երկակի իմաստով: Ալ-Մա'արին գտնում է, որ այն մտքերը և գաղափարները, որոնք նա արտահայտել է բանաստեղծութեանններում, պարտադիր չէ, որ ընդունվեն իր ժամանակակիցների կողմից: Մյուս իմաստը դրսևորվում էր հետևյալ արտահայտությունների մեջ. «հետևել այն ամենին, ինչը ուրիշների համար պարտադիր չէ», այսինքն՝ ժողովածուի բանաստեղծական բարդ «կրկնակի» հանգը, որը շատ հազվադեպ էին օգտագործում նրա նախորդները, հեղինակի կողմից ընտրվել է գիտակցաբար՝ որպես պարտադիր ոճաձև ողջ դիվանի բանաստեղծությունների համար, սակայն այդ հանգի օգտագործումը պարտադիր չէ ուրիշների համար: Ինքը՝ ալ-Մա'արին, ընդգծում է, որ իրենից առաջ այս բարդ հանգով գրել է օմայան բանաստեղծ Քուսայիրը:

Այժմ դժվար է ասել, թե ինչպես է հեղինակը ստեղծել այս դիվանը: Ըստ երևույթին սկզբից էլ ալ-Մա'արին նպատակ է դրել ստեղծելու որոշակի քանակի բանաստեղծություններ, որոնք հաջորդաբար պետք է հանգավորվեին այբուբենի բոլոր տառերով, հակառակ հաջորդականութեամբ, ընդ որում ոչ միայն վերջին բաղաձայնով, ինչպես ընդունված էր արաբական տաղաչափությունների մեջ, այլ վերջին երկու բաղաձայններով և իրենց ձայնանիշերով:

«Լուզումիյաթ»-ը պարունակում է մոտ 1600 ոչ մեծ չափի բանաստեղծություններ, որոնք պարունակում են առավել քան 12.000 բնյթ: Ամեն բնյթ բովանդակում է ավարտուն, աֆորիստիկ-լակոնիկ միտք: Այսպիսով պահպանելով արաբական տաղաչափություն կանոնները՝ ալ-Մա'արին իր ուշ շրջանի երկերի մեջ ամբողջությամբ հրաժարվել է կասիդա-մադհերից, նրանց ավանդական մա-

սերից, պատկերներից և ստեղծել է նոր՝ փիլիսոփայական քնարերգութիւնի ժանր:

Արեւելքում ընդունված ավանդույթի համաձայն, բանաստեղծը, գովերգելով խալիֆին, էմիրին կամ այլ հարուստ ու աղքեցիկ մեկինասի, օժտում էր նրան ենթադրելի (սին) առաքինութիւններով: Առաջին բանաստեղծը, որ խախտեց այդ ավանդույթը, ալ-Մա'արին էր: Նա գտնում էր, որ իսկական բանաստեղծի արժանապատվութիւնից ցածր է պալատական բանաստեղծի քսամնելի գործունեութիւնը: Արդեն իր ստեղծագործական գործունեութեան վաղ շրջանում նա հրաժարվում է ներբողներից ու նվիրատվութիւններից, իսկ 1010 թ. Բաղդադից վերադառնալուց հետո նա ընդհանրապես հրաժարվում է ներբողներ գրել:

Միջնադարյան իրականութեան մեջ ուժեղ էր հավատը կույր ճակատագրի հանդեպ, ինչը արտացոլվել է նաև ալ-Մա'արիի պոեզիայում: Բանաստեղծը, բողոքելով դաժան ճակատագրից, գրում է.

«Ժամանակն անցնում է, և նախասահմանված կարգով տեղի են ունենում իրադարձութիւններ՝ երբեմն ոչ նշանակալի, երբեմն ծանր, երբեմն էլ՝ վեհագուլն» (9, հ. 2., 265):

Բանաստեղծը բողոքում է, որ հնարավոր չէ որևէ բան իմանալ ճակատագրի քմահաճույքների մասին, չնայած որ աստղագետը փորձում է կանխագուշակել իրադարձութիւնները աստղերի միջոցով: Ալ-Մա'արիի ուշ շրջանի պոեզիան հագեցած է երկրում քաղաքական և հասարակական անկայունութեան գիտակցութեամբ: Քաղաքական իրադրութիւնը, որը ձևավորվել էր Միրիայում XI դ. երկրորդ կեսին, չէր կարող իր ազդեցութիւնը չունենալ հեղինակի հայրենի քաղաքի վրա, և հետևաբար, չէր կարող չհուզել բանաստեղծին: Այս ամենը արտացոլվում է նրա երկերում. հեղինակը հետևում է բոլոր իրադարձութիւններին, փորձում է գտնել իրեն հուզող հարցերի պատասխանները:

Նա գտնում է, որ խալիֆաթի նահանգներում ու քաղաքներում փոխվում են կառավարիչները, որոնք հանդես են գալիս տարբեր դրոշների ներքո, ոճանք օրինական կառավարիչներ են, մյուսները, ինչպես օրինակ՝ Բուխները և Ֆաթիմյանները՝ ինքնակոչներ, սակայն իշխանութեան ոչ մի փոփոխութիւն թեթևութիւն չի բերում բնակիչներին:

Արարական հասարակական մտքի պատմութեան մեջ ալ-Մա'արին առաջիններից էր, ով արտահայտեց ժողովրդի առջև իշխանութունների պատասխանատվութեան գաղափարը, այնուամենայնիվ, նա գրում էր, որ անարդարութունը միշտ էլ տիրել է երկրի վրա, և այն վերացնելու բոլոր փորձերը զուր են: Մարդիկ միշտ էլ երազել են խելացի և բարի կառավարչի մասին, որը կկարողանար ապահովել նրանց բարեկեցութունը: Ըստ բանաստեղծի, միայն ուժեղ կենտրոնական իշխանութունը կարող է փրկել ժողովրդին փորձութունից և փորձանքներից:

Իր բանաստեղծութուններում Հեղինակը բավականին հստակ է շարադրում իր վերաբերմունքը ճորտատիրութեան հանդեպ: Իր երկերից մեկում նա գրում էր. «Ես գտնում եմ, որ շահագործումը այլանդակ գործ է, և եթե ստրկավաճառները ինձ լսեն, նրանք չէին ներմուծի ստրուկների» (9, Հ. 1, 155):

Նա մեծ զայրույթով է խոսում նաև այն մարդկանց մասին, որոնք անողոք են վարվում իրենց ստրուկների հետ: Սակայն առավել շատ բանաստեղծին հուզում է մարդու արատավոր ընույթը, նրան զայրացնում են մարդկային նախանձը, փոխադարձ անբարյացակամութունը, երկդիմութունը՝ գծեր, որոնք առավել շատ բնորոշ են հարուստ մարդկանց: Սակայն կարելի՞ է արդյոք մեղադրել մարդկանց, որ նրանք իրենց բնույթով արտասովոր են և ապրում են մեղավոր աշխարհում: Նա գրում է, որ անգամ եթե մարդը ուզենար իրեն բարեկիրթ ու ազնիվորեն լինել, նրա մեղավոր բնույթը կդեղեր նրան գործելու անբարոյական, քսամենլի արարքներ:

Շարունակելով մտորել մարդու և կյանքի մասին՝ ալ-Մա'արին գրում է, որ «թեկուզև մարդը իր ողջ կյանքի ընթացքում միայն տառապանքներ է կրում, նա սիրում է կյանքը և վախենում է այն կորցնել» (10, 175): Երկար կյանքի ընթացքում ձեռք բերած իմաստութունը ալ-Մա'արին դարձրել է միայնակ՝ մարդկանց մեջ: «Նա, ով ապրում է 90 տարի, օտար է (մարդկանց շրջանում — է. Հ.) բոլոր նրա յուրայինները մահացած են, իսկ ապրում են միայն նրանք, ովքեր ծնվել են վերջերս»,— գրում է նա (9, Հ. 1, 352):

Ալ-Մա'արիի ստեղծագործութունների մեջ կարևոր տեղ է գրավում կյանքի և մահվան թեման, որի մասին Հեղինակը խորհում է չափազանց հոռետեսորեն, և դա, իհարկե, կապված է կուլյր բանաստեղծի դառը ճակատագրի հետ:

«Օ՛, իմ երկրային կյանք, մեղք քեզ: Ես այս կյանք մտա ո՛չ բարի կամքով, այլ որովհետև այդպես նախասահմանված էր ճակատագրով: Պատանի տարիներս անցկացրի տառապանքների մեջ, և ահա արդեն երկար է ձգվում իմ այստեղ գտնվելը: Բայց դեռ ինչքա՞ն է մնացել» (9, Հ. 2, 482):

Բանաստեղծը չի հստականում, թե ինչու են մարդիկ ձգտում երեխաներ ունենալ. «չէ՞ որ նրանք մեղանչում են իրենց ժառանգների դեմ, դատապարտում են նրանց մշտական տառապանքների» (7, 176): Ըստ ալ-Մա'արիի՝ կյանքը նման է ծովի, և մենք նրանում միշտ ենթարկվում ենք վտանգների, ինչպես որ ծովահենները՝ իրենց նավերի վրա:

Մահը ալ-Մա'արիի բանաստեղծություններում հանդես է գալիս երկու ձևով. մի կողմից այն կյանքի տառապանքներից ու անախորժություններից ազատվելն է, մյուս կողմից՝ չարիքի ու խարդախությունների մարմնացումն է:

Հեղինակը գտնում է, որ մահից հետո ոչ մի կյանք գոյություն չունի և ծաղրում էր նրանց միամտությունը, ովքեր անդրշիրմյան կյանքի հույս ունեն:

Այսպիսով, ըստ ալ-Մա'արիի՝ կյանքն իմաստ չունի, և մահը իշխում է նրան: Տառապանքներից ու չարիքից խուսափելու միակ միջոցը մեկուսացումն ու ճգնափորությունն է.

«Լավագույնը Աստծո վայրերից այն է, որն ազատ է մարդկանցից: Դե գնա՛ և ապրի՛ր անապատում» (7, 178):

Ասկետականության պատկերացումների հետ է կապված ալ-Մա'արիի վերաբերմունքը կնոջ հանդեպ: Նա գտնում է, որ կինը չպետք է կրթություն ստանա, նա պետք է սովորի ենթարկվել ամուսնուն, դաստիարակել երեխաներին և տնային աշխատանքներ կատարել: Ալ-Մա'արին կտրականապես դեմ էր բազմակնությունը՝ և առհասարակ ամուսնությունը, որը համարում էր տխմար գործ:

Հետաքրքիր է հեղինակի վերաբերմունքը կենդանիների նկատմամբ. նա դատապարտում էր ցանկացած էակի հանդեպ կատարվող բռնությունը, առավել ևս՝ սպանությունը:

Հետաքրքրական է Ալ-Մա'արիի վերաբերմունքը վերաբերմունքը կրոնի նկատմամբ: Պարզ է, որ նա «աթեիստ» չի եղել՝ բառիս այսօրվա իմաստով: Բանաստեղծը չի կարծում, որ գիտությունը ժխտում է Ալլահի գոյությունը: Նա հավատում է, որ Ալլահն է ա-

րարել աշխարհը, բայց միևնույն ժամանակ նրան ծանոթ է Արիստոտելի ուսմունքը աշխարհի մշտնջենականութեան մասին, և այս Հակասութիւնը նա ոչ մի կերպ չի ձգտում հաղթահարել: Նա հավատում է գիտութեանը, բայց գիտակցում է, որ ցանկացած գիտելիք հարաբերական է:

Հոռետեսութիւնը և կասկածը ալ-Մա'արիի աշխարհայացքի գլխավոր գծերն են: Բանաստեղծը կասկածի է ենթարկում գիտնականների ու աստվածաբանների տեսութիւնները՝ աստվածաբանութեան ու գիտութեան ամենատարբեր հարցերի շուրջ: Միևնույն ժամանակ՝ ցանկացած մտքի աշխատանք, որի նպատակն է ճշմարտութեան պարզաբանումը, նա ողջունում է, չնայած որ երբեմն բավականին անահավատորեն է մոտենում այս կամ այն կարևոր ոլորտին առնչվող պրոբլեմների լուծման հնարավորութեան հարցին: Նա գտնում էր, որ ճշմարտութեան որոնման գործում միակ օգնականը կարող է լինել բանականութիւնը:

Բոլոր կրօնական ուսմունքներում, այդ թվում և իսլամում, միշտ էլ շատ սուր է եղել մարդու կամքի ազատութեան հարցը: Ավանդական մուսուլմանական աստվածաբանութիւնը ժխտում էր մարդու ազատութիւնը: Ավանդապազ աստվածաբանութիւնը այն կարծիքն էր առաջ քաշում, ըստ որի՝ չարի գոյութիւնը աշխարհի վրա համատեղելի է իմաստուն, զթառատ և արդար Ալլահի գոյութեան հետ: Ավանդապազներին էին հակադրվում կադարիները՝ իսկ հետագայում՝ նաև մու'թազիլականները⁸, որոնք գտնում էին, որ մարդը ինքն է տնօրինում իր գործողութիւնները: Նրանց կարծիքով մարդու բարոյական կյանքը կորցնում է իր իմաստը, եթե ժխտելու լինենք կամքի ազատութիւնը: Այս վեճը մեծ հետաքրքրութիւն էր առաջացնում ալ-Մա'արիի մոտ: Դաստիարակված լինելով ավանդական իսլամական հավատքի-մեջ՝ բանաստեղծը չի կարողանում հրաժարվել մարդու արարքների կանխորոշվածութեան գաղափարից.

«Իմ ծնունդը իմ ընտրութիւնը էլ էր, այնպես, ինչպես իմ ծերութիւնն ու ամբողջ կյանքը, — և ի՞նչ է մնում իմ կամքի ազատութիւնից» (7, 185):

Աստղագուշակութիւնը պնդում էր, որ աստվածային նախասահմանումը, մարդկանց ճակատագրերը, ամեն ինչ պետք է իրականանա Ալլահի կամքով, և այդ ամենը դրոշմված է աստղային երկնքին, և պետք է իմանալ աստղերի գաղտնիքները, և այդ ժամա-

նակ էլ պարզ կդառնա ապագան: Ալ-Մա'արին երբեմն հավատում է աստղագուշակությանը, երբեմն էլ՝ քննադատում այն:

Սակայն արդարության զգացումը թույլ չի տալիս ալ-Մա'արիին ընդունել աստվածաբան-տրագիցիոնալիստների դոկտրինան:

«Մեղք գործելով՝ դու կտառապես, բայց կասես, թե ստիպված էիր» (7, 185): Մտորելով կանխորոշման գաղտնիքի վերաբերյալ՝ ալ-Մա'արին ժխտում է կամքի ազատության՝ թե՛ կողմնակիցների և թե՛ ընդդիմադիրների տեսակետները:

«Մի՛ եղիր ո՛չ կամքի ազատությունը մերժող Ջաբարի՞, ո՛չ նախախնամությունը մերժող կադարիտ, այլ ձգտիր լինել նրանց մեջտեղում» (7, 186):

Ալ-Մա'արիի վերաբերմունքը ավանդական իսլամին, ինչպես նաև մյուս բոլոր կրոններին, արմատապես տարբերվում էր ավանդականից: Այն ամենը, ինչի վրա հենվում էր իսլամական դոգմատիկան, ժխտվում էր նրա կողմից՝ իբրև մարդկանց հնարք և տուրք ավանդույթին, իսկ բարձրագույն ուժերի նկատմամբ նրա վերաբերմունքը կրում էր փրկիսոփայական բնույթ: Ջարմաջնում է կրոնական գիտակցության պատմական բնույթի նրա ըմբռնումը:

«Մարդը կրոն է դավանում ո՛չ իր համոզմունքներից ելնելով, այլ որովհետև հայրենակիցները նրան սովորեցրել են սահմանված արդեն կրոնը» (7, 186):

Ըստ ալ-Մա'արիի՝ բոլոր կրոնները հիմնված են մոլորության վրա, ընդ որում՝ մոլորությունները մարդկանց պաշարել են բոլոր ժամանակներում: Իսկ պատճառն այն է, որ հավատացյալներից և ո՛չ ոք չի լսում բանականության ձայնը, որը նրանց ճշմարիտ ուղու վրա կղնեիր:

Հեղինակը գիտակցում է, որ կրոնական գաղափարների հիմքում ընկած են բարի նպատակներն ու զգացումները, սակայն այդ գաղափարների շահարկումը արատավոր մարդկանց կողմից՝ նրա մոտ գայրույթ է առաջացնում: Նա գտնում է, որ Ալլահի գոյությանը հավատալու համար անհրաժեշտ է միայն ուշադրությամբ նայել բնության մեջ տիրող ռիթմին ու ներդաշնակությանը: Ալ-Մա'արին գտնում էր, որ բանականությունը բավական է մարդկանց՝ հավատալու Ալլահին: Նա Ալլահի բոլոր մարգարեների գործունեությունը շառլատանություն է համարում:

Այսպիսով՝ «Լուզումիյաթ»-ի աստիճանական ընթերցման ժա-

մանակ պարզ է դառնում հեղինակի վերաբերմունքը կրոնին: Ալ-Մա'արին չի ընդունում նաև հոգևորականությանը և վաճառականներին՝ համարելով նրանց ավագակներ, որոնք թալանում են նստակյաց կյանքով ապրող մարդկանց:

Ալ-Մա'արին չի ընդունում նաև շիականությունը և աղանդների գոյությունը:

Ալ-Մա'արին հետևողականորեն հերքում է իսլամի հիմքերից շատերը և մուսուլմանական ծիսակարգի կանոնները: Նա հրաժարվում է հավատալ հաղիսներին՝ համարելով դրանք մարդկանց սուտ հորինվածքներ: Նա չի ընդունում նաև ջիների ու հրեշտակների գոյությունը:

«Ես երկար կյանք ապրեցի, բայց ամբողջ այդ ընթացքում ես չճանաչեցի ոչինչ, որը կարող էր ինձ վկայակոչել ջիների ու հրեշտակների գոյության մասին» (7, 191):

Նա չի հավատում նաև մեղքերի թողությանը: Հեգնորեն է խոսում նա նաև դրախտի ու դժոխքի մասին, չի ընդունում Մեքքա կատարվող ուխտադնաշնությունը:

Նա Ղուրանում գրված շատ բաներ նույնպես կասկածի տակ է առնում:

Երբեմն բանաստեղծը անհանգստանում է իր կասկածների համար. չէ՞ որ բոլոր մարդիկ միմյանց նման են մտածում, և միայն ինքն է տարբերվում նրանցից, արդյոք ինքը չի՞ խենթացել: Նրա միայնակության զգացումը էլ ավելի է սրվում, երբ նա զգում է, որ համախոհներ չունի:

Ալ-Մա'արիին բնորոշ էր իր ժամանակի համար անսովոր կրոնական հանդուրժողականությունը: Նա զայրույթով է խոսում մուսուլմանների կողմից այլադավաններից հատուկ հարկի գանձման մասին:

Ողջ դիվանով մեկ կարելի է հանդիպել կարճ խրատների, որոնք վերաբերում են մարդու վարքի բոլոր կողմերին:

Նշեցինք, որ ալ-Մա'արին ծանոթ է եղել շախմատին, դա են վկայում շախմատային ֆիգուրների նկարագրությունները, որոնք նա օգտագործում է որպես փոխաբերություններ: Նշենք նաև, որ նա բավականին շատ է օգտագործում բառախաղը:

Ալ-Մա'արիի պոեզիան իր ժամանակի համար առաջընթաց քայլ էր, նոր խոսք դասական արաբական գրականության մեջ:

Ինչ վերաբերում է ալ-Մա'արիի արձակ ստեղծագործություններին, ապա նշենք, որ, ցավոք, մեզ է հասել դրանց մի փոքր մասը միայն: Ալ-Մա'արին երկու անգամ մեկնաբանել է ալ-Մութանաբբիի դիվանը: Նրա ուսուցողական տրակտատների շարքին է դասվում «Ճանապարհին ընկածը», որի վերնագիրը պետք է հասկանալ այն իմաստով, որ նրանում հավաքված մտքերը հեղինակը ձեռք է բերել իր կյանքի ուղու վրայից: Այն հիմնականում պրակտիկ տրակտատներից է:

Ճարտասանության օրինակ կարող են ծառայել ընկերներին ուղղված ալ-Մա'արիի անձնական ուղերձները, ինչպես նաև նրա «Առ-պիսալաթ ալ-Ֆալլահիյան», որը հեղինակը գրել է ի պատասխան վեզիր ալ-Ֆալլահի Հրավերի՝ գնալու նրա մոտ՝ Կահիրե: Նրանում ալ-Մա'արին քաղաքավարի կերպով Հրաժարվում է այդ Հրավերից:

Մեզ է հասել նաև ալ-Մա'արիի «Փուսուլ ուա-լ-ղայաթ»-ի¹⁰ մի մասը, որն իրենից ներկայացնում է դասախոսությունների և քարոզների հավաքածու, որը գիտնականը թելադրում էր իր աշակերտներին: Հեղինակը սկսել է գրել այս գիրքը դեռևս նախքան Բաղդադ գնալը, սակայն ավարտել է այն միայն Բաղդադից վերադառնալուց հետո: Այս աշխատության պահպանված առաջին մասը մեզ հնարավորություն է տալիս դատելու ստեղծագործության ընույթի մասին: Գիրքը բաղկացած է մի շարք գլուխներից կամ բաժիններից, որոնցից յուրաքանչյուրը իր հերթին բաժանված է հանգավորված արձակով մի քանի էտապների, որոնք ավարտվում են հանգավորվող բառով: Ընդ որում՝ բոլոր էտապները ունեն միևնույն հանգը, իսկ գլուխները դասակարգվում են արարական այբուբենի հերթականությամբ՝ գրված հանգով:

Ալ-Մա'արիի դասախոսությունների թեմատիկան գրեթե չի տարբերվում «Լուզումիյաթ»-ի բանաստեղծությունների թեմատիկայից: Դրանք աստվածապաշտ մտորումներ են Ալլահի ամենագործության, արդարության և գթառատության մասին, որոնք ուղեկցվում են աշխարհի անկատարության և կույր ճակատագրի քմահաճույքների վերաբերյալ բողոքներով: Բանաստեղծի համար կյանքի միակ արժանի ձևը ճգնավորությունն է և աշխարհիկ գործերից զերծ մնալը:

Ինչպես մյուս ստեղծագործություններում, այս աշխատության

մեջ ևս տիեզերական և Հասարակական անարդարության մասին մտորումները զուգակցվում են սեփական թիրարժեքության և կյանքում անբարեկեցության ողբերգական զիտակցմամբ:

Ըստ երևույթին՝ աշակերտին ամեն ինչ էլ, որ պարզ էր այդ դասախոսություններում, քանի որ բացակայում են անհրաժեշտ մեկնաբանությունները: Ալ-Մա'արին գրել է նաև անհրաժեշտ մեկնաբանություններ: Ընդ որում՝ եթե դասախոսությունները ցույց են տալիս հեղինակի մտքի խորությունը և հեղինակի ոճական Հմտությունը, ապա մեկնաբանությունները վկայում են նրա մեծ էրուզիցիայի մասին: Ալ-Մա'արիի որոշ թշնամիներ մեղադրում էին նրան այն բանում, որ նա փորձել է այս գիրքը նմանեցնել Ղուրանին և անգամ գերազանցել այն: Այս կարծիքին են նպաստել բանաստեղծ-փիլիսոփայի ազատամտությունը և այսպես կոչված «հերետիկոսական» գաղափարները: Ալ-Մա'արիի՝ արձակով գրված գլուխգործոցներից են համարվում «Ռիսալաթ ալ-մալա'իքան» («Ուղերձ հրեշտակների մասին») և «Ռիսալաթ ալ-ղուլֆրանը» («Ուղերձ ներման») ստեղծագործությունները, որոնք հավասարը չունեն ողջ միջնադարյան արձակում: Հիմքեր կան ենթադրելու, որ «Ուղերձ հրեշտակների մասին»-ը գրվել է XI դ. առաջին տասնամյակներին: Դրա ստեղծման ձևական առիթ է հանդիսացել մի նամակ, որը պարունակել է նեղ լեզվաբանական բազմաթիվ հարցեր: Այն ալ-Մա'արիին ուղարկել է ինչ-որ անհայտ բանասեր: Այս աշխատության մեջ, որն վերոհիշյալ նամակի պատասխանն է, ալ-Մա'արին արտահայտում է իր կարծիքը տարբեր քերականական կատեգորիաների և մասնավորապես հրեշտակների անունների հոլովման մասին: Սակայն, ինչպես պարզվեց, նրա բոլոր մտորումները միայն առիթ էին անդրչիբիմյան աշխարհի մասին իսլամի ավանդական պատկերացումների քննադատության համար: Այս աշխատությունը գրված է արձակով՝ մեծամասամբ Հանգավորված, ուր ներառված են արաբական նախաիսլամական և իսլամական պոետների բանաստեղծություններից հատվածներ:

Այս աշխատությունը սկսվում է նախաբանից, որտեղ հեղինակը նախ և առաջ ներբողում է իրեն նամակ ուղարկողին՝ վերջինիս կրթվածության համար և բողբոցում սեփական էրուզիցիայի պակասից: Նամակի սկիզբը բնորոշ է ալ-Մա'արիի մյուս երգիծական ուղերձներին և իրականում քողարկված հեգնանք է նամակն ու-

ղարկողի նկատմամբ: Ալ-Մա'արին մի շարք դատողություններ է ներկայացնում «Հրեշտակ» բառի վերաբերյալ՝ ուղեկցելով դրանք Ղուրանից և արաբական պոեզիայի վկայակոչումներով (2, 17):

Մի քանի արաբ գիտնականներ, որոնք անարժան համարվեցին դրախտ զնալու համար, խնդրում են դրախտի դոնապան Ռիդվանին, որ նա թույլ տա իրենց ներս մտնել, որպեսզի իրենք կարողանան սովորեցնել դրախտի բնակիչներին արաբական քերականության կանոնները: Ռիդվանը մերժում է:

«Այդ ժամանակ դրախտի դարպասների մոտ տարբեր գիտական թեմաներով բանավեճ է սկսվում: Եկվորները պահանջում են, որ իրենց մոտ գա դրախտի գիտնականներից մեկը, օրինակ՝ ալ-Խալիլը: Ալ-Խալիլը գալիս է և բացատրում, որ դրախտի բնակիչները լավ գիտեն դասական արաբերենը՝ ի տարբերություն երկրի բնակիչների, և քերականության ու բառագիտության ուսումնասիրման կարիք չուն գգում» (8, 203):

Նկարագրելով գիտական բանավեճը՝ Հեղինակը մի կողմից ծաղրում է գիտնական-քերականագիտներին, իսկ մյուս կողմից՝ տիեզերական ձևով պատկերում է ղուրանական պատկերացումները անդրշիրիմյան կյանքի մասին:

Այս աշխատության մեջ ներկայացված մտքերը իրենց հետագա զարգացումը դտան «Ուղերձ ներման»-ում, որը որոշ հետազոտողների համոզմամբ կանխանշում է Դանթեի «Աստվածային կատակերգությունը»:

Այս աշխատության ուսումնասիրութունը մեծապես հեշտանում է այն հանգամանքով, որ մեզ է հասել ոմն Ալի իբն Մանսուր Իբն ալ-Կարիճի նամակը, որի պատասխանն է այս աշխատությունը:

Իր հարգանքի տուրքը տալով հասցեագրի աստվածավախությանը, խելքին ու տաղանդին և այս նամակի համար խոստանալով նրան դրախտային հաճույքներ՝ ալ-Մա'արին անսպասելիորեն կիրառում է հետաքրքիր գրական ոճաձև, գրելած: Նա, կարծես թե կանխատեսելով իբն ալ-Կարիճի ճակատագիրը, տեղավորում է նրան դրախտում: Եվ այստեղ սկսվում է մինչ այդ արաբական գրականության մեջ չտեսնված երգիծական պատմություն՝ անդրշիրիմյան կյանքի մասին, ուր նա ծաղրում է իբն ալ-Կարիճի դժմատիկ հայացքները:

Սակայն ալ-Մա'արին ոչ միայն գրող-սատիրիկ է, այլև առաջին

Հերթին՝ բանասեր-էրուզիտ: Իր այս աշխատությունը նա գրել է ընտրագույն արձակով՝ մասամբ Հանգավորված, լեցուն արաբերեն լեզվի վերաբերյալ բանասիրական հետազոտություններով, բազմաթիվ օրինակներով՝ արաբների պատմությունից և պոեզիայից:

Շարադրանքը սկսվում է նրանից, որ Իբն ալ-Կարիհը, որին հեղինակը անընդհատ շեյխ է անվանում, հայտնվում է դրախտում, ծառերի շուքի տակ, ու պետք է անցկացնի իր ժամանակը մինչև Արդար դատաստանի օրը: Մոտակայքում հոսում է գետը կենդանի ջրով, և դրված են գինով լի կարասներ: Կարասների հիշատակումը դրդում է հեղինակին՝ շեղվել շարադրությունից և ծանոթացնել ընթերցողներին տարբեր պոետների բանաստեղծությունների հետ, որտեղ առկա է «կարաս» բառը:

Ըստ Ղուրանի՝ դրախտում գետերը մեղրից են, այնտեղ կան նաև գինու գետեր, որոնք կհիացնեն անգամ Աբու Նուվասին: Այդ գետերում լողում են զարմանալի ձկներ: Այստեղ նորից, թվարկելով դրախտային բարքերը, նա էքսկուրսներ է կատարում արաբական պոեզիայում և ներկայանում տարբեր բանասիրական նկատողություններ:

Դեռևս աշխարհիկ կյանքում Իբն ալ-Կարիհը երազում էր շփվել Հայտնի գիտնականների հետ, և ահա նա դրախտի այգիներում նրանց հետ է: Նրանք բոլորը մոռացել են փոխադարձ թշնամությունը և այժմ միասին վայելում են դրախտի հաճույքները: Հանկարծակի Իբն ալ-Կարիհը որոշում է ձիով զրոսանքի դուրս գալ, և այստեղ հեղինակը սկսում է ծաղրանքով նկարագրել այս տեսարանը:

Աշխատությունը կոմպոզիցիոն տեսակետից բաժանվում է երկու մասի՝ առաջինը՝ գրական-վախճանաբանական, երկրորդը՝ գրական-պատմական:

Եվ այսպես, ալ-Մա'արին իր այս աշխատության առաջին մասում շարունակ նկարագրում է Իբն ալ-Կարիհի արկածները դրախտում՝ ծաղրելով նրա դոգմատիկ հայացքները:

Ի տարբերություն առաջին մասի՝ այս աշխատության երկրորդ մասը պարունակում է միայն Իբն ալ-Կարիհի տված հարցերի պատասխանները: Ո՛չ նրա կոմպոզիցիան, ո՛չ այն հատվածները, որոնք պարունակում են առանձին բնութագրեր և դիտողություններ, մեծ գեղարվեստական արժեք չեն ներկայացնում, չնայած որ

ողջ երկրորդ մասի ոճը հարուստ է հանգավորված արձակի դեղեցիկ նմուշներով: Սակայն հեղինակի աշխարհայացքի ընդհանուր բնույթի պարզաբանման համար այն մեծ հետաքրքրություն է ներկայացնում:

Չթաքցնելով իր քննադատական վերաբերմունքը Ղուրանի մի շարք դրույթներին վերաբերյալ՝ ալ-Մա'արին հերքում է իր հասցեին անընդհատ ուղղվող անհավաստության մեղադրանքները:

«Ճավոք, - գրում է ալ-Մա'արին, - մարդիկ լի են չարությունք և ստով, և որպեսզի մարդ կարողանա ձեռք բերել հավատացյալ մարդու հեղինակություն, նա պետք է ընդունի որոշ կրոնական դոգմաներ, որոնց հետ նա կտրականապես համամիտ է: Հնագույն ժամանակներից մարդիկ հագել են հավատացյալի դիմակ, սակայն հերետիկոսական մտքերը միշտ էլ տարածված են եղել: Ամեն մի հավատ ունի իր հերետիկոսները, սակայն հաճախ հավատացյալի տեղ են ընդունում այն մարդկանց, որոնք իրականում հերետիկոսներ են»: (7, 220)

Ինչպես գիտենք, իբն ալ-Կարիհը իր նամակում մի քանի մեղադրանքներ է ուղղել նաև ալ-Մուլթանաբբիի հասցեին: Ի պատասխան դրան՝ հեղինակը իր պաշտպանության տակ է առնում նշանավոր բանաստեղծին: Նա գրում է, որ այն ենթադրությունը, թե իբր ալ-Մուլթանաբբին իրեն է ցանկացել վերագրել մարգարեի Ֆուսկիցիա, առաջացել է նրա թշնամիների շրջանում, և նա կասկածի է ենթարկում այդ ենթադրությունը: Իսկ այն բանը, որ ալ-Մուլթանաբբին դժգոհել է իր ժամանակի «մարդկանցից», ապա նման դժգոհություններ առկա են եղել շատ պոետների մոտ: Սակայն պաշտպանելով ալ-Մուլթանաբբին՝ նա ամենևին էլ չի պաշտպանում մարգարեական գործունեությունը՝ նշելով, որ այդ ամենից մարդիկ մեծապես տուժում են: Նա մեղադրում է նրանց, ովքեր, հանդես գալով՝ հերետիկոսական դադափարներով, օգտագործում են մարդկանց անկրթվածությունը՝ սեփական շահերի իրականացման համար:

Ալ-Մա'արին գրում է, որ մարդիկ դավանում են այս կամ այն կրոնը, որպեսզի օգտվեն աշխարհիկ բարեքներից:

Այսպիսով՝ ալ-Մա'արիի «Լուզումիյաթ»-ի բանաստեղծությունները և «Ուղեբժ ներման»-ի թեմատիկան նույնն է, այն դադափարները, որ առաջինում ներկայացված են բանաստեղծական ձևով, երկրորդում շարադրված են արձակով:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1 Կադի - «ղատավոր» (արաբ.):
- 2 Ռիսա - «էլեգիա», «եղերերգություն» (արաբ.):
- 3 Стів' Фильштинский И. М., "История арабской литературы X-XVIII вв.", с. 136:
- 4 Ուաաֆ - «նկարագրություն» (արաբ.):
- 5 Խամրիյաթ - «գիներգություն» (արաբ.):
- 6 Բեյթ (արաբ.՝ «տուն») - արևելյան պոեզիայում վանկաչափական բանաստեղծության հանգավորված ներկտող, որն ունի նաև ինքնուրույն երկտող-բանաստեղծության կարգավիճակ:
- 7 Կադարիներ - (արաբ. «կադր»՝ «կարողություն» բառից), կադարիները կամքի ազատության կողմնակիցներն էին, որոնք հակադրվում էին մարդու կյանքի ու կամքի՝ Աստծո կողմից կանխորոշված լինելու գաղափարին: Գտնում էին, որ մարդն ունի ազատ կամք և ինքն է տնօրինում իր գործողությունները:
- 8 Մու'թազիլականներ - (արաբ. «ի'թազալա»՝ «մեկուսացողներ», «անամնացողներ» բառից), ասկետներ, որոնք որպես կրոնական ճանաչողության հիմնական չափանիշ նշում էին բանականությունը:
- 9 Ջաբարի - (արաբ. «ջաբարա»՝ «բռնություն», «հարկադրանք» բառից), ջաբարիները Աստծո կողմից մարդու կամքի, ճակատագրի բացարձակ կանխորոշվածության կողմնակիցներն էին:
- 10 «Ֆուսուլ ուա-լ-դայաթ» - «Գլուխներն ու նրանց եզրափակումը» (արաբ.):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Аль-Ма'арри Абуль-ль-Ала, "Стихотворения", пер. В. Демидчика, "Восточный альманах", М., 1962.
2. Аль-Ма'арри Абу-ль-Ала, "Рисалат аль-мала'ика", изд. текста и пер. И. Ю. Крачковского, Л., 1932.
3. Аль-Ма'арри Абу-ль-Ала, "Стихотворения", пер. А. Тарковского, М., 1979.
4. Крачковский И. Ю., "Избранные сочинения", т. 2, М-Л., 1956.
5. Крымский А. Е., "Арабская поэзия в очерках и образцах", М., 1906.
6. Куделин А. Б., "Средневековая арабская поэтика", М., 1983.
7. Фильштинский И. М., "История арабской литературы X-XVIII вв.", М., 1991.
8. Шидфар Б. Я., "Абу-ль-Ала аль-Ма'арри ", М., 1985.
9. Al-Ma'arri Abu-l-Ala, "Luzum ma la yalzam", Beirut, 1961.